Վ. Լ. ՇԱՄԼՅԱՆ

ԾԵՐԵՆՑԸ ՈՐՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ

Ականավոր պատմավիպասան Ծերենցը (Հովսեփ Շիշմանյան) անցյալ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության և հասարակական մտքի պատմության նշանավոր դեմքերից մեկն է։

Նա մեծ ծառայություններ է մատուցել հայ ժողովրդին՝ նրա մտավոր և հոգևոր մշակույթի զարգացման գործում։

Լինելով բազմակողմանի զարգացած անձնավորություն, Ծերենցը իր ողջ ընդունակություններն ու հարուստ գիտելիքները հանդես բերեց հասարակական կյանքի տարբեր բնագավառներում և աչքի ընկավ որպես նշանավոր պատմավիպասան, կրքոտ հրապարակախոս, շնորհալի մանկավարժ և հմուտ հռետոր։

Հարուստ և բազմաղան է Ծերենցի հրապարակախոսական ժառանգությունը։

Հրապարակախոսությունը դարձնելով գաղափարական պայքարի զենք, Ծերենցը իր կրքոտ հոդվածներով արձագանքում և ասպարեզ էր հանում ժամանակաշրջանի ծնունդ հանդիսացող խիստ հրատապ ու կարևոր հարցեր։ Իր եռանդուն հրապարակախոսական գործունեության ընթացքում նա ունեցել է գաղափարական տատանումներ ու դեգերումներ, որոնք բացատրվում են նրա ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական բարդ ու հակասական պայմաններով։

Ծերենցի հրապարակախոսության հատկանշական գիծը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն է, անհանգստությունը ժողովրդի ճակատագրի համար և անհաշտ վերաբերմունքը դեպի հայրենի ժողովրդի արտաքին ու ներքին հարստահարիչները, դեպի այն ամենը, ինչ խորթ է ու օտար հայ ժողովրդի համար։ Վիպատանի հրապարակախոսության մեջ հիանալիորեն դրսևորված են Պոլսի և առհասարակ արևմտահայ իրականության համար բնորոշ հայ հասարակական կյանքը հուզող շատ հարցեր, կապված հայ ժողովրդի ազատագրական պայքարի, պոլսահայ վերնախավի քննադատության, հասունյանների ռեակցիոն գործունեության մերկացման, հայ ժողովրդի երկու հատվածների եղբայրական կապերի ամրապնդման և այլ հարցերի հետ։ Ծերենցը քաջ գիտակցում էր, որ ազգային միաձուլության և համախմբման ու ինքնուրույն պետականության ձգտող հայ ժողովրդի համար երկպառակությունները վնասակար էին ու վտանգավոր։ Նկատի ունենալով այդ հանգամանքը, նա ձաղկում և դատապարտում էր կրոնական հողի վրա ծագող գժտություններն ու անմիաբանությունը։

Նա հայրենանվեր հասարակական գործչի ու հրապարակախոսի ազնիվ զայրույթով նշավակում էր հայ վերնախավերին ու նրանց գաղափարախոսներին՝ հայության մեջ կաթոլիկական ու բողոքական գաղափարներ քարոզելու և ազգային երկպառակություն սերմանելու համար։

Մերենցը մասնավորապես անհանդուրժողական վերաբերմունք ուներ Անտոն Հասունյանի և նրա արբանյակների նկատմամբ, որպես Հռոմի պապի հավատարիմ գործակալների։ Մկրտ. Պեշիկթաշլյանի հետ մեկտեղ Մերենցը ծավալում էր հասարակական լայն գործունեություն ժողովրդի բոլոր խավերին համախմբելու ու պապականության և նրա հայ գործակալների ազդեցությունից զերծ պահելու համար։ «Արդ, պապականությունը հալածելու գաղափարը տարածելու պատիվը մեզի ժամանակակից անձանց մեջ նախապես դոկտոր Հ. Շիշմանյանի և կերպով մը անոր աշակերտն համարվող հանգուցյալ Մ. Պեշիկթաշլյանին կպարտինք ընծայել»[1].— գրում է Հ. Սվաճյանը։

Ա. Հասունյանի և նրա համախոհների հակահասարակական գործունեությունը մերկացնող ու խարազանող հոդվածներ է գրել Մերենցը։

Մերկացնելով Հասունյանի հակաժողովրդական գործունեությունը, Մերենցը ընդգծում է վերջինիս սերտ կապն ու համագործակցությունը Հռոմի պապի հետ. «Հասուն՝ պապականության հարազատ որդին է հոգվով, մտքով և սրտով,— գրում է նա,— ունի նա ինչ որ ճշմարիտ կաթոլիկ մը պետք է ունենա՝ նախանձահուզություն, որ ամեն տեսակ ներողամտություն կվտարե, ատելության ոգի ընդդեմ ամեն մարդու, ամեն կրոնի, ամեն ազգի, ամեն դավանության, որ արտաքո է հռոմեական եկեղեցվո»[2]։

Հասունյանի դեմ Մերենոի մղած անհաշտ ու հետևողական պայքարը խորապես սկզբունքային էր իր էությամբ ու բնույթով, որովհետև հասունյանական ոտնձգությունները ջլատում էին այն առաջադեմ ուժերին, որոնք ազնվաբար մարտնչում էին ազգային նկարագրի անաղարտության, ազգապահպանության և ազգային ինքնուրույնության համար հրամայական նշանակություն ունեցող խնդիրների լուծման ուղղությամբ։

Ըստ էության, արևմտահայ մտավորականների առաջադեմ գաղափարախոսները պայքարելով հասունյանականների դեմ, դրանով իսկ գործում էին հօգուտ լուսավորության ու առաջադիմության, ազգային ինքնաճանաչման, ընդդեմ խավարի նախապաշարմունքների, ազգուրացության՝ պարարտացնելով այն հողը, որի մեջ պետք է ցանվեին բարձր հայրենասիրության ու անկաշառ ազգասիրության սերմերը։

Հասունյանների գաղափարաբանությունը և նրանց ընթացիկ ազգավնաս գործունեությունը առավել վտանգավոր էր դառնում և այն տեսակետից, որ նրանց գործունեության հիմքում ընկած բուն նպատակը ճիշտ էր կռահում և ընկալում թուրքական կառավարությունը, ուստի կրոնական-աղանդավորական հողի վրա կատարվող ազգապառակտիչ ամեն քայլ ու գործունեություն նա նպաստավոր էր համարում ժողովրդի գիտակցությունը մթագնելու, ճշմարիտ ազգասիրությանը վնասելու տեսակետից։

Դրանով պետք է բացատրել այն, որ թուրքական կառավարությունը յուրատեսակ թողտվություն և ակտիվ աջակցություն էր ցույց տալիս եվրոպական պետությունների միսիոներական գործակալներին։

Անգլո-ամերիկյան գաղութարարներն իրենց միսիոներներով և ֆրանսիական ու իտալական «լուսավոր» պետությունները Վատիկանի գործակալներով՝ քայքայիչ աշխատանք էին կատարում հայ իրականության մեջ։

---

1 Հ. Սվաճյան, Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 442։

2 «Փորձ», 1879, № 5, էջ 193։

Բաֆֆին «Հասունյանը և յուր կուսակցությունը» նշանավոր հոդվածում խոսելով միսիոներների վնասակար գործունեության մասին, նշում է, որ արևմտահայերի կաթոլիկական դավանանքին հարելու հիմնական պատճառներից մեկը արևմտյան տերությունների ցույց տված օգնությունն է։

«Այսքան դառն և արյունալից փորձերից հետո,— գրում է նա,— արևմուտքից օգնություն հուսալու ցնորքը մինչև այսօր տաճկաստանցի հայերի երևակայության մեջ մեծ դեր է խաղում։

Կապված լինել Հռոմի պապի — այդ արդեն ուժից ընկած ճիվաղի օգնությամբ գրավել Ֆրանսիայի կոնսուլների և դեսպանների պաշտպանությունը— դոքա գլխավոր շարժառիթներն էին, որք ստիպել են տաճկաստանցի հային ընդունել կաթոլիկությունը»[3]։

Եվրոպական գաղութարար պետությունները միսիոներներ ուղարկելով արևմտյան Հայաստան, նպատակ էին հետապնդում ուժեղացնել իրենց գաղափարական ազդեցությունը և թուրքական կայսրության բոլոր ծայրամասերում գտնվող հայերին կաթոլիկ դարձնել։ Նրանց քայքայիչ գործունեության հետևանքով խորանում էին երկպառակությունները հայերի միջև այն աստիճան, որ տարբեր կրոնական դավանանքի պատկանողները դառնում էին թշնամիներ։

Մի կողմից միսիոներական քողի տակ ծպտված գաղութարարների կորրուպտաբեր քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ հասունյանների ազգապաշտպանական գործունեությունը լուրջ վտանգ էին ստեղծել հայերի համար։

Ծերենցը զայրույթով անխնա մտրակում և դիմազերծում է կաթոլիկ և բողոքական միսիոներներին, որոնք հովանավորվելով Արևմուտքի գաղութարար պետությունների և Հռոմի պապի կողմից, կատարում էին իրենց քայքայիչ աշխատանքը։

Ծերենցը թե՛ հասունյանների և թե՛ ամեն կարգի միսիոներների որմնացանության դեմ մղվող պայքարին տալիս էր համազգային նշանակություն։ Նա արծարծում էր այն խնդիրը, որ արհեստականորեն բաժանված երկու հատվածներում գտնվող հայ ժողովրդի առաջավոր ուժերն ու գործիչները պետք է միասնական ու համատեղ ուժերով պայքարեն միսիոներների դեմ, անկախ այն հանգամանքից, թե նրանք ո՞ր երկրից են մտել հայության մեջ։ Ամեն տեսակի միսիոներների դեմ մղվող պայքարի գրավականը, ազգային ինքնաճանաչումն էր, ազգի դրոշակի տակ ծավալվող պայքարը։

Այդ տեսակետից հատուկ ուշադրության են արժանի Ծերենցի «Տաճկահայք և Ռուսահայք» հոդվածի հետևյալ խոսքերը.

«Նույնը Ռուսահայոց եղբարց կփափաքինք տեսնել և խորհրդածել թե Լազարիսթներ, Եզվիտներ և Ամերիկայի հայերեն կաթոլիկության և պրոտեստանության քարոզիչներ կուգան, որ պաշտոն ունեին իրենց կրոնքը տարածելու Տաճկաստանի քրիստոնեից մեջ և որպեսզի իրենց կրոնական առևտուրը ավելի ազդու ընեն արևելյան խեղճ քրիստոնեից մեջ, արևմտյան ժողովուրդք արևելյան լեզուներ կուսանեն, ուսումնարանք կհաստատեն և մինչև համալսարանական գիտության դասերով կշլացնեն միամտաց աչքերը և այդ ուսմունքներով իրենց կրոնական քարոզության մեծ զորություն կուտան։

Ուստի այդ վիճակը նկատելով, կզրուցենք մեր ռուսահայ եղբարց՝ ինչո՞ւ իրենք նաև նույն և նման հզոր տերության մը հպատակ լինելով ու պաշտպա-

3 Բ ա ֆ ֆ ի, Հասունյանը և յուր կուսակցությունը, հատոր 9, էջ 82։

նությունն ունենալով, նույն օրինակի չեն հետևեր։ Ինչո՞ւ կարդիլե զիրենք Հայաստանյաց եկեղեցվո դրոշակը պարզելու ընդդեմ կաթոլիկության և պոռտեստանության հայրենի երկրին մեջ, ուսմունքով և ուսումնարանով մրցելու այդ օտար քարոզությանց հետ և նույն ազատությունը և համարձակությունքը վայելելու»[4]։

Ինչպես հայտնի է 1846 թ. սկզբներին Կ. Պոլսում մի խումբ հայրենասեր երիտասարդների՝ Մ. Պեշիկթաշլյանի, Ս. Հեքիմյանի, Ծերենցի նախաձեռնությամբ հիմնվել էր «Համազգյաց ընկերությունը», որի հիմնական նպատակը ազգային միաբանությունն ու համագործակցությունն էր։

Բնական է, որ «Համազգյաց ընկերության» ազգային լուսավորական և ազգային միավորման ուղղությամբ տարվող պրոգրեսիվ գործունեության դեմ դուրս պետք է գային մոլի հռոմեական Հասունը և նրան հարողները, ուստի նրանք զայրացած սկսում են ամբաստանել ընկերության անդամներին Հռոմի պապի առաջ՝ ներկայացնելով նրանց գործունեությունը իբրև խռովություն օսմանյան կառավարության և հռոմեական իշխանության դեմ. «Հասուն գերապայծառ,— գրում է Ծերենցը,— երբ տեսավ այս վիճակը և տեսավ նաև, որ «Համազգյաց ընկերություն» մը կելներ, որ խոսքեր և ի գործ կդիմեր, ամբաստանություն և զրպարտություն չի մնաց որ չի տեղացին, թե՛ Հռոմ և թե՛ Բ. Դուռը»[5]։

Ծերենցը դեռևս 1850 թ. Փարիզից «Արշալույս Արարատյանին» ուղարկած մի պատասխան հոդվածում, որն ուղղված էր Վիեննայի Մխիթարյաններից Հ. Ղևոնդ Վ. Հովնանյանի «Եվրոպա» թերթում լույս տեսած հոդվածի դեմ, գրում էր. «Դուք անլեզու կեցեր էք և ականատես, երբ գերապայծառ Հասունյանը կհալածե ընկերություն մը, որուն գրեթե անդամ են ձեր ժողովրդյան ընտիր մասը»[6]։

Ծերենցի արդարացի զայրույթն ու այրող ատելությունն ընդդեմ Հասունյանների պայմանավորված էր վերջիններիս քստմնելի հայատյացությամբ, հայությունը ուրանալու հանգամանքներով և հետապնդում էր ապազգայնացման վտանգը կանխելու վեհ նպատակ։

Փառասիրության և եսասիրության տենչով բորբոքված Հասուն, 1852 թ. լատին մի վարդապետի օգնությամբ հրատարակում է մի անստորագիր գրքույկ, որի մեջ խիստ քննադատության է ենթարկում Վենետիկի Մխիթարյանների և լուսավորիչ-դեմոկրատների գործունեությունը,— հերետիկոս և հերձվածող հայոց ընկեր և բարեկամ կանվաներ Մխիթարյանք,— ասում է Ծերենցը։

Ավելորդ չի լինի, եթե այդ գրքույկից Մխիթարյաններին ամբաստանելու վերաբերյալ մի փոքր հատված մեջ բերենք, որը հրատարակված է Զմյուռնիայում լույս տեսնող «Արշալույս Արարատյան» թերթում 1852 թ. հունիսի 2-ին։

«Սուրբ Ղազարոս Մխիթարյան վարդապետները ազգայնության սկզբունքով ցնորյալ—գրում է Հասուն,—հերձվածող եկեղեցվույն հետ երևակայական միաբանության մը ետևե վազելով, կցանկան միացնել այս երկու ժողովուրդը և միմիայն ազգ կազմել. և այս պատճառով գացին երկրի տակեն բերեցին խառնակույտ դեզ մը հայոց հնությանց, թե՛ ճշմարիտ է եղել և թե՛ սուտ, որ-

---

4 «Փորձ», 1879, № 7։

5 «Եվրոպական քաղաքակրթության ներկա ժամանակներուս հայ ազգին վրա բրած ազդեցությունը», 1873, հունվար 29։

6 «Արշալույս Արարատյան», 1850, հոկտեմբեր 27։

պեսզի հիշեցնելով արդյան հայոց իրենց նախնյաց քաջագործությունները՝ արթնցնեն զանոնք և հետամուտ ըլլան իրենց թագավորությունը ստանալու, որուն միայն հիշատակը և անունը մնացած է այսօրվան պես»[7]։

Այդ անստորագիր գրքույկի հիմնական նպատակը արևմտահայ ժողովրդին պառակտելու և կործանելու մոլեռանդ ձգտումն է եղել։ Վերջինիս լույս ընծայումը ոչ միայն անհանգստացրել էր Կ. Պոլսի հայ կաթոլիկներին, այլև այդ գրքույկը ուժեղ ազդեցություն էր գործել նաև Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների վրա։ Նրանք սարսափած հռոմեական սպառնալիքներից պարբերականների էջերում հանդես են գալիս պաշտպանողական դիրքերում, արտահայտելով այն միտքը, թե իբր հայերը պատրաստ են կատարելու հռոմեական բոլոր պահանջները՝ ընդհուպ լատինական եկեղեցու օրենքները ընդունելը։

Ծերենցը հետևելով մամուլում տպագրված Մխիթարյանների հոդվածների արտահայտած գաղափարներին, խստորեն դատապարտում է նրանց կեղծիքն ու ստորաքարշությունը պապականության առաջ։ «Եթե Մխիթարյանք խելոք կենային և հանդարտությամբ պատասխանեին այդ հիմար գրվածքին,— գրում է Ծերենցը,— վնասը բոլոր Հասունին կլիներ, բայց դժբախտությունն այնտեղ էր, որ օրավուր նույն միաբանությունը յուր գլխավոր բարոյականը կորուսել էր և անձնական շահը սպրդեր մտեր էր յուր անդամո մեջ»։ Հասունյանները պապականության հլու կամակատարը լինելով ամենամոլեռանդ ձևով քարոզում էին խորթ ու վնասակար գաղափարներ՝ ընդդեմ ազգային եկեղեցու ու կրոնի։ Նրանք իրենց քարոզները հանգեցնում էին ազգը կրոնի միջոցով ճանաչելուն, գլխավոր և որոշիչ հատկանիշը դարձնելով կրոնական պատկանելությունն ու կրոնական ըմբռնումները, դրանով իսկ թուլացնելով ազգայնության գաղափարը, ազգային ինքնագիտակցությունն ու ինքնաճանաչումը։ Ինքնին հասկանալի է, որ սուլթանական Թուրքիայի կատաղի քաղաքականության պայմաններում հասունյանական որոգայթները հարվածում էին ազգության հիմքերին։ Այդ էր, որ քաջ գիտակցում էր հրապարակախոս Ծերենցը, ուստի և նա կրքոտ ու միանգամայն վճռական կերպով ձեռնոց էր նետում հասունյաններին և անխնա քննադատում նրանց գործունեությունը։

Ծերենցը առիթ բաց չէր թողնում ժողովրդական հոծ զանգվածներին և մտավորականության ապակողմնորոշված ներկայացուցիչներին հստակ ու մեկեն բացատրելու Հասունյանի նպատակներն ու ձգտումները, որոնք լիովին խորթ էին ու հետադիմական։ Նա ոչ միայն իր հրապարակախոսական հոդվածներում, այլև առհասարակ իր բոլոր գրավոր ելույթներում ու ճառերում տարբեր տեսանկյուններով անդրադառնում էր այդ կարևորագույն հարցին։

Հասունյանների դեմ Ծերենցի մղած պայքարը եղել է անողոք, կրքոտ ու բուռն և միշտ պսակվել է հաջողությամբ՝ հօգուտ ազգայնության գաղափարի ուժեղացման և հայրենասիրության բարձրացման։

Ծերենցը իր հոդվածներում անդրադառնալով կաթոլիկ և լուսավորչական եկեղեցիների միջև մղվող անհաշտ պայքարին, այն եզրակացության է հանգել, որ վճռական նշանակությունը պետք է տալ լուսավորչական եկեղեցուն, որի միջոցով, ըստ նրա, հնարավոր է հասնել ինքնագիտակցության և պահպանել ազգի միասնությունը։

---

7 Ա. Ջ ո ր ա ն յ ա ն, Մ. Պեշիկթաշլյան, Փարիզ. 1907, էջ 162։
8 «Փորձ», 1879, № 5, էջ 200։

Հաճախ է նա ընդգծել այն հանգամանքը, որ ինքը հայ «ազգային եկեղեցու» լուսավորչական եկեղեցու ջերմ հետևողներից է, և այդ եկեղեցին է համարում միայն առաջավոր եկեղեցի. «Ես համոզված եմ, վերապատվելի հայր,— գրում է նա Փարիզից Հ. Ղևոնդ Հովնանյանին ուղղված հոդվածում,— թե ազգին ճշմարիտ բարիք ուզողներն և անոնց մտածմունքը այս դժբախտ բաժանման պատճառն ու բաժանումը. վերցնելու, ազգին պզտի մասը, մեծ մասիս հետևցնելն է, այսինքն՝ բոլոր հայ ազգը էջմիածնա կաթողիկոսին հնազանդեցնել»[9]:

Ծերենցը միամտություն ունի հավատալու, թե սուլթանական բռնակալական ծանր լուծը թոթափելու և ազգային պետական ինքնուրույնություն ձեռք բերելու գործում միակ որոշող դերը կարող էր խաղալ լուսավորչական եկեղեցին:

Սակայն այնպես, ինչպես ժամանակաշրջանի մի խումբ լուսավորիչ-դեմոկրատներ չկարողացան ցույց տալ հասարակական հարաբերությունների վերափոխման ուղիները, այդպես էլ Ծերենցը իր աշխարհայացքի սահմանափակության հետևանքով չկարողացավ հասկանալ, որ տվյալ պայմաններում լուսավորչական եկեղեցին չէր կարող լուծել ազգային միասնական ուժերի և պետականության վերականգնման հարցը:

Պատմական մոտեցման տեսակետից Ծերենցի մոտ դրականը այն է, որ հայրենասեր հրապարակախոսը ցանկացել է լուսավորչական եկեղեցու միջոցով, որպես կարևոր գործոնի, ակտիվացնել պայքարը պապական ազդեցության դեմ և նպաստավոր հող ստեղծել ազգի միաձուլման և համախմբման համար՝ ընդդեմ ազգապառակտիչ ուժերի ու գործոնությունների:

Նա որպես ազգային առաջավոր գործիչ, մինչև կյանքի վերջը համառորեն պայքարել է հասունյանների, միջնադարյան խավարամտության, ազգային ճնշման և հասարակության զարգացումը կաշկանդող ամեն տեսակի կապանքների դեմ, հանուն լուսավորության և ազատության հաղթանակի:

* *

XIX դարի 50—60-ական թվականներին Թուրքիայի տնտեսական-քաղաքական կյանքում տեղի էին ունենում զգալի փոփոխություններ:

1853—1856 թթ. Ղրիմի պատերազմը նոր դժվարությունների առաջ կանգնեցրեց սուլթանական Թուրքիային: Նոր իրադրության պայմաններում, թուրքական կառավարությունը տեսնելով դեմոկրատական շերտերի որոշակի աշխուժությունն ու օրեցօր ազդեցիկ ուժ դառնալը, ցանկանում է մասնակի զիջումներով խարել հայ բուրժուազիային և նրան դարձնել իր հլու կամակատարը: Այդ ծրագրի կենսագործումը հանդիսացավ Թուրքիայում ապրող հայերի ներքին կյանքի ղեկավարմանը վերաբերող մի կանոնադրության հաստատումը: 1860 թ. մայիսի 24-ին ընդունված և հաստատված կանոնադրությունը Ն. Ռուսինյանը մկրտում է «Ազգային սահմանադրություն» անվամբ: «Ազգային սահմանադրությունը» իր պատմական նշանակությամբ պրոգրեսիվ երևույթ էր. նրա ստեղծմամբ ինչ-որ չափով սահմանափակվում էր ամիրաների և կղերականների կամայականությունները, սահմանվում էր վերահսկողություն «ազգի» ելումուտական ծախքերին, հնարավորություն էր տրվում

9 «Արշալույս Արարատյան», 1850, հոկտեմբեր 27:

արևմտահայ դեմոկրատական խավերի ներկայացուցիչներին մասնակցելու ազգային գործերի կառավարմանը։ «Սահմանադրության» հռչակման շրջանում, ինչպես նաև 1860-ական թվականի սկզբին, ապագա արևմտահայ դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները՝ Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը, Մերենցը մեծ հույսեր էին կապում «Ազգային սահմանադրության» հետ։

Մերենցը արևմտահայ առաջադեմ գործիչների հետ կանգնած լինելով սահմանադրական շարժման կենտրոնում, եռանդուն գործունեություն էր ծավալում ազգի համախմբման և նրա ուժերի հավաքագրման ուղղությամբ, վճռական պայքար ծավալելով ազգապառակտիչ ուժերի դեմ։ «Երբ ազգը մեկ ձեռքով արտաքին հարստահարողաց դեմ բողոք-բողոքի վրա դնելով արդարություն պիտի խնդրե և դտնե իր զավակները պատսպարելու համար,— գրում է նա,— մյուսովն ալ պետք է ջախջախե այն ներքին հարստահարողներին, որ գայլ են իրենց ժողովուրդոց, որ չար օրինակ են իրենց հոտին, որ իրենց տգիտությամբ կույրք են կուրաց առաջնորդք, որ պճնասեր զարդերով նման են գերեզմանաց բռելոց»[10]։

Մերենցը իբրև ազգային լուսավորության աներկյուղ բարոզիչ և աննկուն գործիչ իր գինակիցներ՝ Գր. Օտյանի, Ն. Ռուսինյանի, Սերվիչեի և այլոց հետ, եռանդագին առաջ էր մղում լուսավորական շարժումը և ջանում էր «Ազգային սահմանադրությունը» օգտագործել իբրև կարևոր ազդակ ազգի քաղաքական զարթոնքի և ինքնաճանաչման համար. «Քանի մը երիտասարդք առանց փորձառության հաջողեցան պայն ստեղծել (խոսքը Սահմանադրության ստեղծման մասին է— Վ. Ճ.), որ այսօր հայ ազգը իր նեցուկը, իր խարիսխը, իր փրկությունը կանվանե և կտոնե»,— գրում է նա[11]։

Սահմանադրության հարցի շուրջը մամուլում և բանախոսության մեջ ծավալվող բանավեճերին, Մերենցը վերաբերվել է հատուկ հետաքրքրությամբ և հանդես եկել թե՛ գրավոր և թե՛ բանավոր՝ անսքող արտահայտելով իր հայացքներն ու տեսակետները։ Նրա ըմբռնմամբ ազգային սահմանադրությունը արժանի էր համակրանքի և պաշտպանության։ Պարբերականի էջերում տպագրված նրա հոդվածներից ակնհայտ է դառնում հրապարակախոսի դրական վերաբերմունքը դեպի «Ազգային սահմանադրությունը»։ «Ի շնորհիվ Սահմանադրության,— գրում է նա,— հայ մամուլն էլ ազգային նյութոց վիճաբանության համար կատարյալ ազատություն կը վայելե չի զրուցելու թե մեծ ծառայություններ կրնե ազգին, նաև մինչև արտաքին հարստահարության քիչ շատ առաջքը առնելով, ժողովրդական տգիտության չափով դարման մը մատուցանելով»[12]։

Պետք է ասել, որ սահմանադրական շարժումը չնայած իր առաջադիմական բնույթին բնավ միատարր չի եղել։ Այդ շարժման հարել են հասարակական-քաղաքական տարբեր հայացքներ ունեցող մարդիկ, որոնք «Ազգային սահմանադրության» ստեղծման շուրջը ծավալվող պայքարի ընթացքում բաժանվել են առանձին խմբավորումների՝ սահմանադրության կողմնակիցների և հակառակորդների։

Սահմանադրության կողմնակիցները ցանկանում էին սահմանափակել պատրիարքի իրավունքները և վերջ տալ ամիրայության տիրապետությանը,

10 «Մասիս», 1872, № 1209, էջ 2։
11 Նույն տեղում, էջ 1։
12 Նույն տեղում, № 1194, էջ 2։

նրանք աշխատում էին իրենց ձեռքը կենտրոնացնել «ազգի» կուլտուր-կրթական և բարեգործական հիմնարկների գործունեությունը, կարգավորել և վերահսկել ֆինանսական գործերը. այս խումբը լիբերալ սահմանադրականների խումբն էր։

Մյուս խմբավորումը պոլսահայ իրականության մեջ գործող կղերամիրայական ռեակցիոն տարրերն էին, որոնք համախմբվելով ռեակցիոն գաղափարախոս Հովհաննես Ջամուռճյանի (Տերոյենց) շուրջը, համառ պայքար էին ծավալում տապալելու Սահմանադրությունը։ «Դաս մը մարդիկ, իրենց ընթացքեն, իրենց խոսքերեն կիմացնեն,— գրում է Ծերենցը,— թե գաղտնի մեքենավարությանց կը ծառայեն, և թե ոչ միայն Խրիմյան, այլև սահմանադրությունն միանգամայն կուզեն տապալեն»[13]։

Եվ, վերջապես, պոլսահայ հասարակության հաջորդ խմբավորումը, որը սկիզբ էր առել 1850-ական թվականների վերջերից, «Մեղու» թերթի խմբագիր Հ. Սվաճյանի շուրջը համախմբված տարրերն էին, որոնք անմիջական կապ էին պահպանում հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի հետ։

Պայքարի առաջին շրջանում, այսինքն՝ 1857—1862 թթ. Ծերենցը, ինչպես նաև արևմտահայ մյուս դեմոկրատները ապրում էին սահմանադրական պատրանքներով։ Սակայն «Սահմանադրության» շուրջը մղվող պայքարի երկրորդ էտապում նա այլևս չէր պատկանում այն գործիչների թվին, որոնք չափից ավելի մեծ նշանակություն էին տալիս «Սահմանադրությանը» և խիստ միակողմանի կերպով թմբկահարում այն՝ գերագնահատելով նրա դերն ու նշանակությունը։

«Մեր ազգը թեպետ ներքին կառավարություն մը ուներ,— գրում է նա,— բայց այդ կառավարությունը բավական ժողովրդական չէր, իր ազգին սիրելի ըլլար և բարոյական ազդեցություն մը ունենար բավական զորավոր չէր, որ իր ազդեցությունը հնազանդություն գտներ, ուստի այս տարտամ վիճակը, դարմանի մը պետք ուներ, բայց այդ դարմանի ոչ անունը գիտեր ժողովուրդը և ոչ գաղափար ուներ»[14]։

«Ազգային սահմանագրության» կենսագործման սկզբնական շրջանում, 1860 թ. սեպտեմբերի 1-ին, Ծերենցի նախաձեռնությամբ հիմնադրվում է «Բարեգործական ընկերությունը», որը փաստորեն 1846 թ. «Համազգյաց ընկերության» վերակազմավորումն էր։

«Ընկերության» տնօրեն կազմի մեջ մտնում էին՝ Գր. Օտյանը, Մկր. Աղաթոնը, Սեր. Թագվորյանը, Ծերենցը, Մ. Մյուհենտիսյանը։ Ընկերության ընդհանուր ժողովի նախագահը՝ Մկր. Աղաթոնն էր։

«Ընկերության» անդամները 1861 թ. մշակում են կանոնադրությունը. այդ հանձնախմբի ատենադպիրը Ծերենցն էր։

«Բարեգործականի» հիմնական նպատակը «ազգին որբ, անտեր և չքավոր տղայքը երկրագործության և արվեստից զրաղեցնելու միջոցներն ի գործ դնելն էր»[15]։ «Ընկերության» առաջադրած հիմնական նպատակների մասին մեզ գաղափար է տալիս «Կռունկ հայոց աշխարհի» ամսագրում տպագրված «Հայ-

13 «Արևելյան մամուլ», 1873, 23 սեպտեմբեր։

14 «Եվրոպական քաղաքակրթության ներկա ժամանակներուս հայ ազգին վրա ըրած ազդեցությունը», 1873, էջ 19։

15 «Կռունկ հայոց աշխարհի», 1862, էջ 620։

տարարությունը», որտեղ Ծերենցը մանրամասնորեն մեկնաբանում է «Ընկերության» գործունեությունն ու ծրագիրը։ «Բարեգործականի» հեղինակները ցանկանում էին առևտրական հարաբերությունների զարգացման համար հարթել ուղի՝ ընդօրինակելով եվրոպական քաղաքակրթությունը, և միաժամանակ մտահոգվում «դարման» գտնել վերացնելու կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով առաջացած թշվառությունները։ Ո՞րն էր լինելու այդ դարմանը։ «Շատ դյուրությամբ լուծելու խնդիր մըն է ասի,—պատասխանում են նրանք։ Ի բնե արհեստավոր և երկրագործ ազգ մը՝ իր ձեռքի արվեստն ու երկրագործությունը անգիտանալու համար թշվառության մատնըված՝ ուրիշ կերպով չը կրնար կանգնիլ, բայց միայն նոր քաղաքականության պահանջած արվեստներն ու երկրագործությունը ձեռք բերելով»[16]։

Մեզ համար մի կարևոր փաստաթուղթ է այդ «Հայտարարությունը», որտեղ առաջադեմ գաղափարախոսները երկրագործության տարածման ճանապարհով ձգտում էին զարգացնել ազգային արդյունաբերությունը։ Նրանց ծրագրերում մեծ տեղ էին գրավում ազգության սոցիալական դրության բարելավման հիմնական խնդիրները։

Սակայն ո՞րն էր լինելու այն երկիրը, որը պիտի կարողանար իրականացնել «Բարեգործականի» անդամների տարիներ շարունակ փայփայած երազանքները։

Նրանք գործունեության ծավալման համար ասպարեզ են ընտրում ոչ թե բուն Հայաստանը, այլ Կիլիկիան։ Կիլիկիայի հայերին տնտեսական օգնություն ցույց տալու և այնտեղ առևտրա-արդյունաբերական կենտրոններ հիմնելու նպատակով «ընկերությունը» հավաքում է զգալի քանակությամբ մի գումար և Կիլիկիա է ուղարկում Ծերենցին՝ «ագարակ մը գնելու և երկրագործական վարժարանի մը հիմնարկության «Ընկերության» նպատակը իրագործելու»[17]։

«Այսօր,—գրում է Ծերենցը,—երբ բազմաչարչար մեր Հայաստանի որդիք ցրվյալ եղբայրց կդիմեն օգնության, Կիլիկիո հայուն վրա, երբ կծանրանա բռնության ձեռքը․ ընկերություն մը կկազմվի Պոլիս Կիլիկիո հայ երիտասարդության օգնելու համար»[18]։

Ծերենցը 1862 թվականին ուղևորվում է Կիլիկիա։

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ֆրանսիական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության և իտալական ազատագրական շարժումների ազդեցության ներքո, Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հպատակ ժողովուրդները, որոնց թվում նաև հայերը՝ չդիմանալով տնտեսական և իրավական ծանր ճնշումներին, բարձրացնում են ազգային-ազատագրական պայքարի դրոշը։

Թուրքական բռնակալության դեմ ուղղված հայ ժողովրդի ազատագրական շարժման ամենափառահեղ դրվագներից մեկը՝ Զեյթունի հերոսական ապըստամբությունն էր։

Օսմանյան կառավարությունը երկյուղ կրելով, որ նախապատրաստվող ազատագրական շարժումներին կարող են մասնակցություն ցույց տալ նաև Զեյթունի բնակիչները, փորձում է այնտեղ կենտրոնացնել զգալի քանակու-

16 Նույն տեղում, էջ 614—615։

17 «Փորձ», 1879, № 29։

18 Նույն տեղում։

թյամբ զորք։ «Ցավալի լուրեր կհասնին Տավրոսի լեռներեն,—գրում է Ծերենցը իր հոդվածներից մեկում,—Մարաշի փաշան իր զորքերով այս քաղաքին մոտ գտնված հայու գյուղերը կոխեց, 200 հոգի սպանվեցան, եկեղեցին ու տներն հրո ճարակ դարձան»[19]։

1860 թ. կեսերին թուրքական զորքը Ազիզ փաշայի հրամանատարությամբ նախապատրաստվում է մի նոր արշավանքի Զեյթունի դեմ։ Այդ մասին մեզ ուշագրավ տեղեկություն է տալիս դարձյալ Ծերենցը. «Ալի փաշան (մեծ վեզիրը) գրուցած էր 1861 թվականից առաջ դոկտոր Պառաթ՝ հռչակավոր գերմանացի ճանապարհորդին, թե՝ «Կիլիկիո լեռներուն մեջ կան մի քանի ապրստամբ ժողովուրդք, հուսամ թե քիչ ատենեն կանոնք անհետ կանենք»[20]։

Ծերենցի հոդվածից մեջբերված տեղեկությունից կարելի է ենթադրել, որ թուրքական պետությունը Զեյթունի վրա հարձակվելու գաղափարը հղացել էր դեռևս 1861 թ. և նրա հիմնական նպատակը հայ լեռնականներին բնաջնջելն էր։

Զեյթունցիների 1862 թ. ապստամբության նախապատրաստման ու ղեկավարման գործում նշանակալից դեր են կատարել արևմտահայ ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչները։ Այնպիսի հասարակական գործիչներ, ինչպիսիք էին՝ Մ. Պեշիկթաշլյանը, Հ. Սվաճյանը, Սեր. Թագվորյանը, Ծերենցը և շատ ուրիշներ կապեր են ունեցել Զեյթունի ապստամբների հետ։

Արժանի է հիշատակել Մ. Նալբանդյանի կատարած մեծ դերը արևմտահայ ազատագրական շարժումները ղեկավարելու գործում։

Կան վկայություններ այն մասին, որ Նալբանդյանը մտերիմ հարաբերությունների մեջ է եղել «Բարեգործականի» անդամների հետ։ Այդ մասին ստույգ տեղեկություն է տալիս Սեր. Թագվորյանի 1862 թ. մայիսի 14—26-ը թվակիր ուղարկած նամակը Պետերբուրգ՝ Մ. Նալբանդյանին։ Այս կիսածածկագիր նամակի մեջ հեղինակը խոսում է գաղտնի խմբակի աշխատանքների կազմակերպման ու նրա հետագա գործունեության մասին։

Այնտեղ հիշատակվում է «Բարեգործականի» անդամների ունեցած կապը Զեյթունի ապստամբների հետ և վերջիններիս օգնություն ցույց տալը Զեյթունի հերոս ժողովրդին։ Այստեղից հետևում է, որ Նալբանդյանը անմիջական մասնակցություն է ունեցել արևմտահայ ազգային-ազատագրական շարժումներին, և բնավ պատահական չէ, որ «Բարեգործականի» անդամները ղեկավարող ցուցումներ են ստացել մեծ հեղափոխականից։

Արդյոք Ծերենցը որևէ գործնական կազմակերպչական կապեր ունեցե՞լ է Մ. Նալբանդյանի հետ։ Թեև մինչ այսօր փաստական, ուղղակի և կոնկրետ տվյալներով չի պարզաբանված Ծերենցի՝ Նալբանդյանի հետ ունեցած անձնական ծանոթության հանգամանքը, ինչպես նաև Զեյթունի 1862 թ. ապատամարտի անմիջական մասնակից լինելը, բայց հրապարակի վրա եղած որոշ փաստեր անառարկելիորեն ապացուցում են Ծերենցի մասնակցությունը Զեյթունի ապստամբության ու Նալբանդյանի հետ նրա ունեցած ծանոթության հանգամանքը։ Հայտնի է մի բան, որ Հրանտ Ասատուրը իր «Ծերուկ Մալթրզը» փոքրիկ ակնարկում խոսելով Ծերենցի հետ ունեցած առաջին հանդիպման մասին, տալիս է այն վկայությունը, որ հայրենասեր այդ մարդը շատ բաներ է պատմել իրենց 1860 թ. սերնդի և Նալբանդյանի մասին, որին անձամբ ծա-

19 «Փորձ», 1879, ապրիլի 29։

20 Նույն տեղում։

նոթ է եղել։ Ինչպես տեսանք, Ծերենցը 1862 թ. մեկնում է Կիլիկիա։ Զեյթունի նշանավոր ապստամբության նախօրեին և թե ապստամբությունից հետո նա անմիջական կապեր է հաստատում ապստամբների հետ և գործնական օգնություն ցույց տալիս նրանց։ Այդ մասին մեզ ուշագրավ տեղեկություն է տալիս Սեր. Թագվորյանի նամակը՝ ուղարկած Նալբանդյանին։ Վերջինս լինելով «Բարեգործական ընկերության» ղեկավարներից մեկը, հաճախ Նալբանդյանին իրազեկ է պահել «ընկերության» անդամների Կիլիկիայի հետ ունեցած փոխադարձ կապի մասին։ «Տավրոսեն վարդապետ մը եկավ հոս,—գրում է նա,—քանի օր է, որ կաշխատիմ առուտուր մը ընեմ այս մարդու հետ. հազիվ կրցա 20—30 հոգիով ժողով մը կազմել և այն ալ մեծ դժվարությամբ։ քիչ մը ստակ ես, քիչ մըն ալ բարեկամին մեկը տվինք անոր, որ հարկավոր եղած դասագրքերը առնե և ճամփու ծախք ընե։ Մնացածին համար խոսք տվինք, որ պիտի աշխատինք իրենց համար»[21]։ Ուրեմն, պետք է ենթադրել, որ «Բարեգործականի» անդամները, որոնց թվում նաև Ծերենցը, անմիջական կապ են պահպանել հեղափոխական-դեմոկրատի հետ և նրանից ստացել ղեկավարման ցուցումներ։

Զեյթունի 1862 թ. հերոսամարտերից հետո հայ կաթոլիկ համայնքի պետ Ա. Հասունյանը թուրքական կառավարության առաջ սկսում է ամբաստանել ընկերության քաղաքական նպատակադրումը. «Բարեգործական ընկերության» կազմությունն և Շիշմանյանի Պոլսեն մեկնիլը խռովեցին Հասունի ոգին»,—գրում է Ա. Արփիարյանը։

Թուրքական կառավարությունը օգտագործելով Հասունի մեղադրական ակտը, իսկույն հրամայում է դադարեցնել «ընկերության» գործունեությունը։

Ծերենցը, որ դեռ մինչ այդ գտնվում էր Կիլիկիայում, հրաման է ստանում անհապաղ վերադառնալ մայրաքաղաք։ Պետությունը նրան մեղադրում է թուրքական կառավարության դեմ հեղափոխություն նախապատրաստելու մեջ։ Նա անմիջապես վերցվում է հսկողության տակ, իսկ «Բարեգործական ընկերությունը» լուծարքի է ենթարկվում։

* *
*

1871 թվականի հունվարին Զմյուռնիայում լույս է տեսնում «Արևելյան մամուլ» ամսագիրը, որը, հիրավի, նոր էջ է բացում արևմտահայ մամուլի պատմության մեջ։ 1872 թ. հրապարակախոսը սկսում է թղթակցել «Արևելյան մամուլ»-ին «Ծերենց» ծածկանունով։

Մ. Մամուրյանը սիրով ընդունում է նոր թղթակցին և դրվատում նրա կախարդական գրիչն ու «հոգու թռիչքը»։ Հանդեսի 1872-ից մինչև 1878 թ. տարբեր համարներում «Ծերենց» ստորագրությամբ տպագրված թղթակցություններով նա մեզ ներկայանում է որպես կրքոտ հրապարակախոս։ «Արևելյան մամուլի» 1873 թ. № 11-ում տպագրված թղթակցություններում Ծերենցը քննադատում է կրոնական ու պատրիարքական ժողովների կառուցվածքը, մասնավորապես այդ ժողովներում քննարկվող հարցերի շուրջը առաջացած վիճաբանությունները։

21 Տե՛ս Սեր. Թագվորյանի նամակը Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերում», էջ 445—446։

Շատ ավելի կարևոր է թղթակցության երկրորդ մասը, ուր Ծերենցը խիստ ծաղրում է «Ազգային» գործիչներին։ «Սահմանադրությունը վերաքննելի կըսենք և կը դավանինք,— գրում է նա,— և երբ վերաքննության կհասնինք այնչափ անկարող ենք, որ տարիներով անշարժ ձեռքերնիս կկարկամի հոդված մը փոխելու։ Կրոնական ժողով մը ունինք, որ ոչնչով չի զբաղվում. թատրոնական, ուր ժողովուրդը գործողության միայն տեսնելու կհաճախե և մտավորական լույս փնտրելու փափագ շատ քիչ կը ցուցանե»[22]։

Այսպիսով, հրապարակախոսը «Արևելյան մամուլի» էջերում հրատարակված բազմաթիվ հոդվածների մեջ չժխտելով «Ազգային սահմանադրության» կարևորությունը, նրա դերն ու նշանակությունը, միաժամանակ քննադատում է քաղաքական և կրոնական ժողովների բնույթն ու սահմանադրական հիմնարկների մեջ եղած ազգային հատկանիշներից զուրկ անգործներին։

Ինչպես հայտնի է ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Բալկանյան թերակղզում սլավոնական ժողովուրդները ազգային-ազատագրական պայքար էին մղում Թուրքիայի դեմ և ոգևորում նաև հայ հասարակական միտքը։

Հեղափոխական-դեմոկրատական ուղղության գործիչները, ինչպես նաև լիբերալներից շատերն ու ազգային-պահպանողականներից ոմանք արևմտահայ ժողովրդի ազատագրումը տեսնում էին թուրքական լծի դեմ բալկանյան ժողովուրդների պես ըմբոստանալու, զինված պայքարով սեփական ազատ ու անկախ հայրենիք ստեղծելու գաղափարի մեջ։

1876 թ. Թուրքիայում տեղի է ունենում պալատական հեղաշրջում։ Թոփ-Գափուի պալատում դավադրաբար սպանվում է Աբդուլ Ազիզը։ Նույն թվականի օգոստոս ամսին «Երիտասարդ թուրքերը» գահ են բարձրացնում՝ Աբդուլ Մեջիդի որդուն՝ Աբդուլ Համիդին (1876—1909 թթ.)։ Ստեղծված ներքին բարդ իրադարձությունների ճնշման տակ Աբդուլ Համիդը 1876 թ. դեկտեմբեր ամսին հրապարակում է օսմանյան նոր Սահմանադրություն, որով իբր թե հավասար իրավունքներ էր շնորհվում հպատակ բոլոր ժողովուրդներին, որոնց թվում նաև հայերին։ Հրապարակված նոր Սահմանադրության նկատմամբ հայ հասարակական-քաղաքական տարբեր խմբավորումները ունեին տարբեր տեսակետներ և տարբեր նպատակներ։ Արևմտահայ գործիչների մի մասը, այդ թվում նաև Ծերենցը՝ տարված սահմանադրական պատրանքներով, որոշ հույսեր էր կապում թուրքական պետության խոստացած Սահմանադրության հետ։

Այսպես՝ «Բարձրագույն եպարքոս Մահմուդ փաշայի շրջափերականը» նշանավոր հոդվածում հրապարակախոսը գրում է. «Վեհափառ սուլթանը յուր գահակալության օրեն մինչև այսօր կրկին ու կրկին արդարություն խոստացավ։ Յուր պաշտոնատյարց պարտքն էր նորա խոստմունքը կատարել, և ահա կուգա Մահմուդ փաշա ինքն ալ համոզված, թե այս երկրին միմիայն բարոյական կապն արդարությունն է... Ամեն իմաստուն կառավարություն, որ հայրական է, պարտականություն ունի այդ ազատությունը չէ թե միայն չի վտարելու, այլև տարածելու և սնուցելու յուր գրկին մեջ, և օգուտ աշխարհիս և հայրենյացը»[23]։

Սակայն, ինչպես որոշ մտավորականների, այնպես էլ Ծերենցի հույսը կարճ ժամանակամիջոցում հօդս ցնդեցին։ Գոյություն ունեցող պատմա-քա-

22 «Արևելյան մամուլ», 1873, № 11։
23 «Մասիս», 1871, № 1154։

դաքական իրավիճակը բացահայտեց Սուլթան Համիդի հորինած Սահմանադրության ողջ կեղծությունը։ Հայ գործիչների համար էլ պարզ դարձավ, որ դա խաբեբայական միջոց էր, քանի որ հրապարակված Սահմանադրությունը ոչ միայն չբարելավեց թուրքական բռնակալական կարգերում հեծող արևմտահայ ժողովրդի առանց այն էլ ծանր դրությունը, այլ ընդհակառակը՝ այն դարձրեց առավել ողբերգական։

«Մենք՝ Թուրքիայի հայքս, ինչպես բնական էր, կուզեինք այդ հավատի անխտրությունը և քրիստոնյաների և մահմեդականների մեջ իրավունքների հավասարությունը, բայց չտվին, որ ունենայինք և բռնի պահանջելու կարողություն էլ չունեինք»[24],— գրում է հուսախաբված Մերենցը։

Սահմանադրության հռչակումից հետո Թուրքիայում գոյություն ունեցող քաղաքական անարխիան, պետական շահագործումը, բարբարոսական ճնշումներն ու հալածանքները քայքայում են ժողովրդական մասսաներին, զրկում նրանց ապրուստի նվազագույն միջոցներից։

Ստեղծված ծանր դրությունը հարկադրում էր անհանգրվան աշխատավորին թողնել դարավոր հայրենիքը, տունն ու տեղը և գաղթել օտար երկրներ։

Հայերի մասսայական տեղահանությունը երկրից դառնում է մի իսկական ազգային ողբերգություն. մամուլը ահազանգում էր հասարակական մտքի տարբեր հոսանքների դիրքորոշումը ազգային դժբախտության տխուր հետևանքների մասին։ Արտագաղթի դեմ հանդես էին գալիս ժամանակի հայ մտավորականության առաջավոր ներկայացուցիչները՝ Բաֆֆին, Գր. Արծրունին, Մ. Մամուրյանը, Տեկանցը և ուրիշներ։

Մի ինքնատիպ երևույթ էր 1876 թ. «Արևելյան մամուլ»-ում տպագրված Մերենցի նամակը գաղթականության խնդրի վերաբերյալ։

Մերենցը անդրադառնալով հայերի տարագրության աղետալի երևույթներին, չի կարողանում ճիշտ բացահայտել արտագաղթի հիմնական պատճառները։ Նրա կարծիքով, գաղթելով հայրենի երկրից անդաստանական հայը հարստություն և անձնական երջանկություն կարող էր ձեռք բերել միայն օտար ափերում (Հնդկաստան, Եգիպտոս, Ամերիկա և այլուր), ափեր, ուր դարեր շարունակ տարուգրման դառնության բաժակն ըմպած հայ ժողովուրդը հարկադրված էր թողնել իր հարազատ հայրենի հողը և զանգվածային բնույթով գաղթել օտար երկրներ բախտ որոնելու։

«Պարսից փախստական հայք հնդկաց վաճառաշահ և երևելի քաղաքները բնակելով փոքրիկ գաղթականության ձև առին,— գրում է նա իր հոդվածներից մեկում,— Տըլլի, Ակռա, Սուրատ, Պոմայ, Մատրաս, Մախսուտապատ քաղաքներում հայք հանգիստ ապրիլ սկսան և ի հետին չքավորութենե հարստություն և գանձ ալ կը դիզեին...»[25]։

Հայերի արտագաղթի վերաբերյալ Մերենցի արտահայտած այդ արտասովոր տեսակետի դեմ դուրս են գալիս Բաֆֆին, Գր. Արծրունին և այլ հասարակական գործիչներ։

«Մշակ»-ի 1876 թ. ապրիլ ամսին տպագրված «Գժատուն» վերնագիրը կրող հոդվածում Բաֆֆին խստորեն պախարակում է հայ ժողովրդին օտար հորիզոններ մատնացույց անող Մերենցին։ «Մարդու կյանքը կապված է բնու-

---

24 Նույն տեղում, № 1155։

25 «Արևելյան մամուլ», 1875, դեկտեմբերի 18։

թյան հետ և նրա մայրը է հողը,—գրում է Բաֆֆին,—եթե հայը կամեր ապագա և կյանք ունենալ, նա պետք է իր ապրուստը հիմնի հաստատուն հողի վրա և այդ հողը թող լինի այն, ուր սրբված և գնված է մեր նախնյաց արյունով»[26]։

Անցյալ դարի 70-ական թվականներից սկսած հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ սկսվեց մի նոր շրջան։

Հայ առաջավոր մտավորականներ Գր. Արծրունին, Բաֆֆին, Ռ. Պատկանյանը թուրքական բարբարոսական տիրապետության ծանրատար լծից արևմտահայերի ազատագրության գաղափարը բացառապես կապում էին Ռուսաստանի հետ։ Նրանք կոչ էին անում հայերին՝ դիմել զինված պայքարի և սեփական ուժերով նվաճել դարերով երազած ազատությունը։

Մտավորականության մի այլ խմբավորում երկյուղ կրելով ժողովրդական զանգվածների հեղափոխական շարժումների աշխուժացումից, մամուլի էջերում հանդես էին գալիս զինված պայքարի գաղափարախոսության դեմ՝ համարելով այն ապարդյուն և անիմաստ։ Նրանք իրենց հոդվածներում այն միտքն էին արտահայտում, թե ազատությունը հնարավոր է նվաճել խաղաղ ճանապարհով, ռեֆորմների միջոցով, եվրոպական պետությունների միջամտությամբ։ Այդ շրջանում Ծերենցի հոդվածներում արտահայտված գաղափարները հակասական էին։

Երկյուղ կրելով մասսաների հեղափոխական շարժման արյունահեղությունից նա գտնում էր, թե հայ ժողովուրդը իր հույսը պետք է դներ ոչ թե զինված ապստամբության, քաղաքական պայքարի, այլ վերևից եկող ռեֆորմների վրա։

Այս հարցի կապակցությամբ նա 1876 թ. «Արևելյան մամուլ»-ի էջերում մի յուրահատուկ բանավեճ վարեց Արծրունու և Բաֆֆու հետ։ Ծերենցը խիստ քննադատության էր ենթարկում «Մշակ»-ի խմբագրին և նրա աշխատակից Բաֆֆուն այն բանի համար, որ նրանք կոչ են անում զինված ապստամբության և ժողովրդին մղում քաղաքական պայքարի։ Այստեղից ինքնին հասկանալի է դառնում հրապարակախոսի լիբերալ ռեֆորմիստական մտորումները։

«Մենք կուզենք, որ ամեն հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն,—գրում է նա,— վարեն եկած հեղափոխություն (թե որ հաջողին ալ) այնչափ աղետք, այնչափ թշվառություն ունին, այնչափ արյուններու առիթ կլինին և հայ ազգը այնչափ քիչ արյուն ունի յուր երակներուն մեջ, որի կարողութենեն վեր է այդ մասին շոայլ լինել և ընդհակառակն վերեն եկած հեղափոխությունք միշտ հաստատ են և երբեք արյան գիներով չեն լինիր»։

Մ. Մամուրյանը մերժելով վաղեմի դաստիարակի լիբերալ-ռեֆորմիստական մտորումները, տողատակին գրում է հետևյալ ծանոթությունը. «Ներվի մեզ ըսել, որ այս մասին մեծն նամակագրին հետ տարակարծիք կգտնվինք։ Այդ դրությունն ամեն տեղի ու պարագայի չկրնար հատկանալ»[27]։

Այստեղից հետևում է, որ Ծերենցը դեռևս չէր հասել Նալբանդյանի՝ կացնի միջոցով հարցը լուծելու տեսակետին։ Ինչպես հայտնի է, Մ. Նալբանդյանը արևմտահայ ժողովրդի քաղաքական ազատագրության հարցը կապում էր սլավոնական երկրների հեղափոխական շարժման հետ, այլապես ոչ մի փոքր ժողովուրդ չէր կարող թուրքական վայրագ ինքնակալությունից ազատագրվել

26 «Մշակ», 1876, № 14։

27 «Արևելյան մամուլ», 1876, № 10։

ինքնուրույն ձևով։ Այսպիսով, Մերենցը չկարողացավ հասկանալ, որ ժողովրդական մասսաների ազգային ու սոցիալական ճնշումներից ազատագրվելու միակ միջոցը զինված պայքարն է։

* *
*

1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) ստորագրվում է ռուս-թուրքական պատերազմի արդյունքներն ամփոփող Սան-Ստեֆանոյի դաշնագիրը։

Այդ պայմանագրի համաձայն անկախ էին հռչակվում Սերբիան, Չերնոգորիան, Ռումինիան։ Ինքնավարություն էին ստանում Բուլղարիան, Բոսնիան, Հերցեգովինան և Արևմտյան Հայաստանի մեծ մասը՝ Ղարսը, Արդահանը, Բայազետը։

Մերենցը Կիպրոսից հետևել է այն հրատապ հարցերին, որոնք վերաբերվել են հայ ժողովրդի պատմական զարգացմանը և նշանակալից են եղել ազգային զարթոնքի համար։ Սան-Ստեֆանոյի դաշնագրից հետո հայ ժողովրդի ցնծությունը խորապես հստակում է նաև Մերենցին։

«Հինգ հարյուր տարիներե վերջ վերջապես այն անտարբեր կարծված ազգը ձայն մը կձգեր աշխարհիս վրա յուր ազատության փափագ կը հայտներ»,—գրում է նա[28]։

Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով եվրոպական դիվանագիտության խաղացանկ էր մտնում Արևմտյան Հայաստանի «Բարվոքումների և բարենորոգումների», իսկ ավելի ուշ ինքնավարության կամ անկախության խնդիրը՝ «Հայկական հարց» անունով։ Այդ հարցով սկսեցին զբաղվել եվրոպական մամուլը և առհասարակ, այսպես կոչված, մեծ պետությունները՝ Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան։

Բեռլինի կոնգրեսի բացման նախօրյակին հայ մտավորականության մի զգալի մասը դրականորեն է ընկալում «Հայկական հարցը» և լուրջ հույսեր տածում եվրոպական պետությունների նկատմամբ։ «...Վասընդի իրական և հաստատուն բան մը եթե կարելի էր Տաճկաստանի մեջ եվրոպական պետության ձեռնտվությամբ և երաշխավորությամբ միայն կարելի էր»,—գրում է Մերենցը։

«...Որ առանց եվրոպական պետության միջամտության բան մը կարելի չէ, ոչ բարելավություն, ոչ ինքնուրույնություն և ոչինչ»[29]։

Հայաստանի ինքնավարության իրականացումը կապելով եվրոպական դիվանագիտության միջամտության հետ, Մերենցը այդ նույն հոդվածում գրում է, որ «հայը մի բան կուզե՝ ինքնավարություն։ Այդ ինքնավարություն բառը չէր նշանակեր անկախություն, բոլորովին բաժանումն, որոշումն Օսմանյան պետության, ոչ մի խելահաս հայ այդ բանը չփնտրեց և չփափաքեցավ»[30]։

Պատմական հետագա դեպքերը սակայն ճիշտ հակառակը ապացուցեցին։ Մեծ պետությունների միջամտությամբ Արևմտյան Հայաստանին ինքնուրույնություն շնորհելու հարցը ի դերև ելավ։

---

28 ԳԱԹ, Մերենցի ֆ. № 17, էջ 2։
29 «Մեղու Հայաստանի», 1880, № 21։
30 Նույն տեղում։

Ծերենցը ապրեց խոր հիասթափություն։ Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը սթափեցրեց նրան քաղաքական սին հույսերից, խորտակվեց և Եվրոպական պետությունների նկատմամբ եղած պատրանքը։ Ատելությամբ լցված եվրոպական տերությունների հանդեպ նա «Ժամանակի ոգին և հայոց ապագան» նշանավոր հոդվածում խիստ քննադատության ենթարկեց Անգլիայի վարած գաղութային նողկալի քաղաքականությունը։ «Անգլիան բարոյապես և նյութապես պատասխանատու է և գործակից է ամեն անիրավության, որ Ասիո Տաճկաստանի մեջ տեղ ունեն 1878 թվականին հուլիսի 4-են վերջը»,— գրում է նա[31]։

Շարունակելով իր խորհրդածությունները այդ հարցի կապակցությամբ, նա եզրակացնում է «Երեսանց է Անգլիո ազատակամությունն ու ներողամտությունը»[32]։

Դատապարտելով եվրոպական մեծ պետությունների քար անտարբերությունը դեպի հայ ժողովրդի ազատագրության հարցերը, նրանց կողմից տրված խոստումները որակեց որպես դատարկ ու սնամեջ բառեր, որոնք ոչ մի արժեք չունեին։ Նա հեգնում է բուրժուական մեծ պետությունների ցույց տված օգնությունը, որը իր միջամտությամբ հայ ժողովրդին կանգնեցրեց լիակատար կործանման առջև։ «Եվ որովհետև Սան-Ստեֆանոյի և Բեռլինի սեղաններե ընկած փշրանքները հայուն կենաց փոքր ճարակ մը խոստացան, պետք էր, որ Հայաստանի և Կիլիկիո հայը ամեն տեսակ և ավելի տառապանաց ու հալածանաց ենթարկվի...»[33]։

Բեռլինի կոնգրեսի նախօրեին անգլիական դիվանագետներին հաջողվեց խաբեբայությամբ թուրքերին պարտադրել կնքելու Կիպրոսի դաշնագիրը, որով ստրատեգիական նշանակություն ունեցող այդ կղզին հանձնվում էր Անգլիային և ի փոխհատուցումն դրա վերջինս հանդես էր գալիս Թուրքիայի երդվյալ պաշտպանի դերում։

«Յուր բոլոր զորությունը կրոնքին վրա դնելով (խոսքը Թուրքիայի մասին է — Վ. Շ.), հուսահատած յուր եվրոպական բոլոր երկրներեն, որ մեկիկ-մեկիկ կերթան յուր ձեռքեն, հուսահատած կղզիներեն, որոնց ամենեն մահմեդականը զԿիպրոս յուր ազատ կամոք տվավ Անգլիո»,— գրում է Ծերենցը[34]։

Հրապարակախոսը մերկացնելով թուրքական բռնապետության դիվային քաղաքականությունը հայերի և առհասարակ Թուրքիային հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ և այդ հարցում Անգլիայի «թուրքապաշտպան» ու կեղծ հայրենասիրական քաղաքականությունը, գրում է.

«Հիմա, այսօր Անգլիո շահերն կպահանջեն, որ փոքր Ասիո (մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանաչեր, այլ այդ անունը հրնչող կղակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկրները ազատ մնան օտարին միջամտութենե և միջամտության ամեն առիթներե, ուստի այդ սուրբ նպատակին հասնելու համար պետք է և պետական իրավունքը կպահանջե, որ որևիցե կասկածելի տարը անհետ ընենք, որպեսզի ապագան ապահովենք. ուրեմն այդ ազգը վերցնելու, անհետ և անճետ ընելու ենք»[35]։

---

31 «Փորձ», 1879, № 1, էջ 208։
32 Նույն տեղում, էջ 210։
33 «Փորձ», 1879, № 7։
34 «Մեղու Հայաստանի», 1880, № 20։
35 «Փորձ», 1879, № 7։

Այդ դժնդակ պայմաններում իսկ Ծերենցը չէր կորցնում հոգու տոկունությունն ու հավատը գալիքի հանդեպ. ավելին, նա փորձում էր ընդդիմադրության կազմակերպման և վտանգից զերծ մնալու դարմաններ առաջադրել։

Անկախ այն հանգամանքից, որ նրա առաջարկած միջոցները արմատական չէին և հազիվ թե խափանեին թուրքական կառավարության ոճրագործ պլանները, բայց և այնպես դրանք վկայում են հայրենասեր վիպասանի հատուկ մտահոգությունը իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ։

Ծերենցին անհանգստացնող՝ հոգեկան տվայտանք պատճառող բուն խնդիրը հայությանը դառնությունից ազատելու, լուսավորության և ազատության ուղիով առաջ տանելու խնդիրն է, այդ է նրա հոգսերի հոգսը։ Նա իր հոդվածների մեջ այդ գլխավոր հարցի առնչությամբ շոշափել է և այլ խնդիրներ, բոլոր դեպքերում հանդես բերելով ազնիվ հայրենասերի, ազատության և լուսավորության իսկական ջատագովի ողջախոհություն և հայ ժողովրդի ապագայի նկատմամբ պայծառ լավատեսություն։

Իբրև հրապարակախոս Ծերենցը նշանակալից դեր է կատարել արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ։ Իր հրապարակախոսական փայլուն տաղանդով, կրքոտ և բուռն հոդվածներով նա իր դեմ է հարուցել տգետ և խավարամիտ հայ կաթոլիկ համայնքի թշնամանքը։ Սակայն անլուր հալածանքներն ու սպառնալիքները չեն ընկճել հայրենասերի կամքը, նա շարունակել է մարտնչել խավարի ու հետամնացության դեմ, տարածելով լուսավորության գաղափարների սերմերը արևմտահայ անդաստանում։

Ծերենցի հրապարակախոսական հոդվածները հայ հասարակական մտքի պատմության հետաքրքիր էջերից են։

Արևմտահայ հասարակական կյանքը ուսումնասիրող յուրաքանչյուր անձնավորություն չի կարող անուշադրության մատնել նրա հրապարակախոսությունը։

«Հ. Շիշմանյանը իբր հրապարակագիր և վիպասան երևան կուգա Ծերենց ծածկանունով,— գրում է Ա. Արփիարյանը,— իր հոդվածները ախորժանքով կկարդացվեն, պատմական հմտությամբ լեցուն են։ Իր վիպասանությունը մեր անցյալ կյանքեն առնված՝ դյուրընթեռնելի են»[36]։

В. Л. ШАМЛЯН

ЦЕРЕНЦ-ПУБЛИЦИСТ

Резюме

Церенц (Овсеп Шишманян)—выдающийся представитель западноармянской литературы и истории общественной мысли второй половины прошлого столетия. Велики его заслуги в деле развития духовной культуры армянского народа. Богато и многогранно публицистическое наследие Церенца.

Используя публицистику в качестве идеологического оружия, Церенц своевременно откликался на животрепещущие вопросы современности, ярко и талантливо освещая их в своих статьях.

36 «Բաներեր գրականության և արվեստիս», գիրք 1-ին, էջ 199։

Любовь к родине и народу, беспокойство о их судьбе, непримиримость к внутренним и внешним врагам, ко всему, что было чуждо армянскому народу—основные черты публицистики Церенца.

В данной статье исследуются выдвинутые Церенцом проблемы, которые были тесно связаны с общественно-политической жизнью западных армян—освободительное движение армянского народа, укрепление братских уз западных и восточных армян, провозглашение западноармянской конституции и др.

Публицистические статьи Церенца—яркая и интересная страница истории армянской общественной мысли.